ԵԴ1/1723/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատին դիմելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 15-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է ստացվել Հայկ Արմենի Համբարձյանի, Աշոտ Ռուդոլֆի Բաղդասարյանի, Արման Կարենի Համբարձյանի և Նարեկ Գևորգի

Մարտիրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով թիվ 14174824 (ԵԴ1/1723/01/25) քրեական վարույթը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ս.Անդրեասյան) 2025 թվականի մայիսի 16-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 8-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա.Ադամյան) 2025 թվականի օգոստոսի 22-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատին դիմելու մասին:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 28-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հայկ Համբարձյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) ***** *****-ի *******-ը, իր մորեղբոր տղայի՝ Արման Կարենի Համբարձյանի միջնորդությամբ 2024 թվականի սեպտեմբերի 4-ին հեռախոսակապ է հաստատել **********-ի հետ և ցանկություն հայտնել գնել ապակե փաթեթներ ու պատվիրել ապակիներ, որի դիմաց ըստ պայմանավորվածության՝ պետք է վճարեր 355.000 ՀՀ դրամ գումար: 2024 թվականի սեպտեմբերի 12-ին **********-ը գումարի մի մասը՝ 100.000 դրամը փոխանցել է Ռ.Բաղդասարյանին և վերջինին պարտք է մնացել ընդհանուր 255.000 ՀՀ դրամ: 2024 թվականի սեպտեմբերի 17-ին **********-ին է զանգահարել Ա.Համբարձյանը և հայտնել, որ գումարը պետք է*

*անհապաղ վերադարձնել **********-ին, ինչին ի պատասխան **********-ը հայտնել է, որ սեպտեմբերի 18-ին այն կվերադարձնի, ինչից հետո Ա.Համբարձյանը կրկին զանգահարել է **********-ին և պահանջել հանդիպել Երևան քաղաքի Կիևյան փողոցում: 2024 թվականի սեպտեմբերի 18-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, Երևան քաղաքի ********* հասցեի մուտքայքում, **********-ին են մոտեցել Աշոտ Բաղդասարյանը, Հայկ և Արման Համբարձյանները, Նարեկ Մարտիրոսյանը, որտեղ **********-ի հետ ունեցած խոսակցության ընթացքում վերջինիցս պահանջել են պարտք մնացած գումարը՝ միաժամանակ Արման Համբարձյանը **********-ի առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքներ է հնչեցրել, ինչից հետո Հայկ Համբարձյանը շահադիտական դրդումներով, խմբի կազմում՝ Աշոտ Բաղդասարյանի, Արման Համբարձյանի, Նարեկ Մարտիրոսյանի հետ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, ********* *******-ի կամքին հակառակ, բռնություն գործադրելով, այն է՝ Նարեկ Մարտիրոսյանը բռնել է ****** ********-ի հագուստից, Ա.Համբարձյանը և Աշոտ Բաղդասարյանը ոլորել են ձեռքերը, այնուհետև մտցրել նրան պատկանող «Քրայսլեր 200» մակնիշի ********* պետհամարանիշի ավտոմեքենան: Դրանից անմիջապես հետո, Հայկ Համբարձյանը նստել է մեքենայի ղեկին, իսկ Ա.Բաղդասարյանը՝ ******* *****-ի հետ մեքենայի հետևի նստատեղին, իսկ Նարեկ Մարտիրոսյանը՝ Արման Համբարձյանի հետ միասին՝ կապույտ գույնի «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայով գնացել են նրանց հետևից: Այնուհետև, շարունակելով հանցավոր մտադրության իրականացումը՝ **********-ին առևանգել և տեղափոխել են ********** քաղաքում գտնվող սակրավորային զորամասի ավտոկայանատեղի, որտեղ իջեցնելով ավտոմեքենայից՝ Արման Համբարձյանը իրեն խաբելու պատճառով 1 անգամ ապտակել է **********-ին, իսկ Հայկ Համբարձյանը բռունցքով 1 անգամ հարվածել է **********-ի ականջի հատվածին: (…)»*[1]:

5.1. Նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 196-197:

հարուցվել նաև Աշոտ Բաղդասարյանի, Արման Համբարձյանի և Նարեկ Մարտիրոսյանի նկատմամբ[2]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարումը համարվում է ավարտված տուժողին իր բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս բերելու և այլ վայր տեղափոխելու պահից: Այսինքն՝ հանցանքն ավարտվում է այն վայրում, որտեղ անձին, իր կամքին հակառակ, կամ կամքն անտեսելով տեղափոխում են, ուստի համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեական գործն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում ավարտին է հասցվել ենթադրյալ հանցանքը:*

Ասվածը հիմնավորելու համար անհրաժեշտ է նաև համեմատել ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն մարդուն ազատությունից ապօրինի զրկելու համար, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ կամ 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները:

Սույն հոդվածով նախատեսված հանցանքի օբյեկտիվ կողմի գործողությունը ավարտված է համարվում անձին ազատությունից զրկելու պահին, դիցուք՝ Երևան քաղաքում: Այս դեպքում տուժողը գտնվում է անազատության մեջ, սակայն վերջինիս չեն տեղափոխում այլ վայր, սահմանափակվում է միայն նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը: Նման պայմաններում, անձի արարքում բացակայում են առևանգման, թրաֆիքինգի և պատանդ վերցնելու կամ պահելու հանցակազմերը:

*Այն դեպքում, երբ անձին բացի ազատությունից զրկելուց տեղափոխում են այլ վայր՝ դուրս բերելով իր բնական միկրոսոցիալական միջավայրից, դիցուք՝ *******,*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 206-207, 216-217,246-247:

ապա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածով նախատեսված հոդվածով:

*Սույն դեպքում՝ տուժող **********-ին մեղադրյալները, համաձայն ներկայացված մեղադրանքի՝ ենթադրաբար տեղափոխել են *********** քաղաքում գտնվող սակրավորային զորամասի ավտոկայանատեղի, որտեղ իջեցնելով ավտոմեքենայից՝ Արման Համբարձյանը իրեն խաբելու պատճառով 1 անգամ ենթադրաբար ապտակել է ***************-ին, իսկ Հայկ Համբարձյանը բռունցքով 1 անգամ ենթադրաբար հարվածել է Դ.Սարգսյանի ականջի հատվածին: Այսինքն՝ թեև մեղադրյալները տուժողին ենթադրաբար ազատությունից զրկել են Երևան քաղաքում՝ Երևան քաղաքի ********** հասցեի մոտակայքում, սակայն դրանից հետո վերջինիս ենթադրաբար տեղափոխել են Արմավիրի մարզի ************ քաղաք: Ստացվում է, որ մեղադրյալներն ենթադրաբար ունեցել են միասնական դիտավորություն անձին այլ վայր՝ ********** տեղափոխելու համար, վերջիններս իրենց մեղսագրվող ենթադրյալ հանցանքը ավարտին են հասցրել ********* քաղաքում, որպիսի պայմաններում, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեական գործն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում կատարվել է ենթադրյալ հանցանքը, սույն դեպքում՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանին: (…)»[3]:*

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը, վերը նշված պատճառաբանությամբ և հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, ելնելով ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն այն պետք է ըստ ընդդատության ուղարկվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածը, որը վերաբերվում է մարդուն առևանգելուն,*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 100-104:

ունի ձևական հանցակազմ և հանցագործությունն ավարտված է համարվում մարդուն առևանգելու, այսինքն՝ նրան այլ վայր տեղափոխելու պահից, իսկ այլ ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ համապատասխան անձի՝ իր կամքով գտնվելու համար բնական համարվողից տարբերվող ցանկացած ուրիշ վայր:

Օրինակ՝ երբ անձին իր կամքին հակառակ հրում նստեցնում են մեկ ուրիշի ավտոմեքենան, առևանգումն ավարտված է համարվում նրա՝ ավտոմեքենայում հայտնվելու պահից: Այդ առումով ավտոմեքենայի տեղից շարժվելն ու դեպի այլ վայր ընթանալը արարքի որակման համար որևէ նշանակություն չունի:

*Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ հանցագործությունն ավարտվել է ********** քաղաքում, սակայն եթե համաձայնենք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի մեկնաբանության հետ, ապա այս դեպքում խոսքը կվերաբերվի արդեն քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածին, ինչի մասին նաև վկայակոչել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր 08.08.2025թ որոշմամբ:*

Եվ նկատի ունենալով, որ քրեական գործը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանից՝ գործն ըստ ընդդատության ուղարկելու որոշմամբ, ապա Դատարանն արձանագրում է, որ առկա է ընդդատության մասին վեճ և վեճը լուծելու համար քրեական վարույթը պետք է ուղարկվի ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթն ընդդատյա է

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 119-131:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *« 1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ թեև մեղադրյալները տուժողին ենթադրաբար ազատությունից զրկել են Երևան քաղաքում, սակայն դրանից հետո վերջինիս ենթադրաբար տեղափոխել են Արմավիրի մարզի ********* քաղաք, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[8]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ձևական է և հանցագործությունն ավարտված է համարվում մարդուն առևանգելու, այսինքն՝ նրան այլ վայր տեղափոխելու պահից, գտել է, որ սույն դեպքում ենթադրյալ հանցանքն ավարտվել է տուժողի՝ ավտոմեքենայում հայտնվելու պահից[9]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների բովանդակությունից պարզ է դառնում, որ վերջիններիս վերագրվող ենթադրյալ հանցանքը փաստացի ավարտվել է տուժող **********-ին ******** քաղաք տեղափոխելով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ մեղադրյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով վերագրված ենթադրյալ հանցանքն ավարտվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայկ Արմենի Համբարչյանի, Աշոտ Ռուդոլֆի Բաղդասարյանի, Արման Կարենի Համբարչյանի և Նարեկ Գևորգի Մարտիրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով թիվ ԵԴ1/1723/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ